«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Արժեհամակարգի զարգացումը <<Գոյական>> թեման ուսուցանելիս

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Ժաժոյան

ՄԱՐԶ Շիրակի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Ձիթհանքովի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3

2. Հիմնամաս մաս

Գլուխ 1. Արժեհամակարգի զարգացումը <<Գոյական>> թեման ուսուցանելիս ----------5

3. Հետազոտական մաս----------17

4. Եզրակացություն ----------19

5.Գրականության ցանկ ---------- 20

Ներածություն

Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ: Արժեքներն են իմաստավորում կյանքը : Առանց արժեքների կյանքը դատարկ է: <<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր համախմբերի ներդաշնակ փոխզազարգացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձեւավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Ժամանակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա `չանտեսելով համամարդկային արժեքները:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա մյուս գործոնը տարիքայինն է,երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային առանձնահատկությունների: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ

ամենակարևորը մանկավարժների կողմից <<աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձեւավորումն է>>,_ գրել է Մոնտենը։

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն)։ Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաեւ բացասական։Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում , այլ նաև ուսումնական հաստատություններում ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով։

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում ։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը։ Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ և այլն։

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 2. Արժեհամակարգի զարգացումը <<Գոյական>> թեման ուսուցանելիս

Մայրենի լեզուն վճռորոշ դեր ունի սովորողի արժեհամակարգի ձևավորման մեջ։ Մայրենի լեզվի ուսուցիչը լուծելու է հայոց լեզվի դասավանդմանը առաջադրված նոր խնդիրներ, ուսուցման և ուսումնառության նորարարական մեթոդների ու մեթոդական հնարների ներդրման խնդիրներ `դրանք ծառայեցնելով դասավանդման որակի բարձրացմանը։

Խոսքի մասերի ուսուցումը սկսվում է գոյականից, որովհետև գոյականի ուսուցումը ձևաբանության հիմքն է կազմում։ Ուստի ուսուցիչը պետք է կարողանա ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպել, ճիշտ մեթոդներ ընտրել, որն էլ կնպաստի թեմայի լիակատար և համակողմանի յուրացմանը։ Գոյական թեման ուսուցանվում է 7- րդ դասարանում։

Այս խոսքի մասը աշակերտներին ծանոթ է ցածր դասարաններից,այդ պատճառով էլ փորձում ենք հենվել նրանց նախագիտելիքներին և զրույց կազմակերպել գոյականի շուրջը։ Պահանջում եմ թվել առարկաներ, որոնց հետ գործ են ունեցել ։ Թվարկած բառերը գրում ենք գրատախտակին, առանձնացնում ո'վ, ինչ հարցերին պատասխանողները։

Խոսում եմ այն մասին, որ առարկա ասելով հասկանում ենք անձ և իր, ինչպես նաև՝ բնական և հասարակական երեկույթներ։

Բացատրում եմ <<գոյական>> բառի կազմությունը (գոյ+ ական)= գոյություն ունեն)։

Կատարում ենք գործնական վարժություններ։

1. Տրված գոյականները խմբավորել ըստ արտահայտած իմաստի (անձ, իր, երևույթ, գաղափար)
2. Անավարտ նախադասություններ գոյականներով
3. Որոշել որ գոյականն ինչ հարցի է պատասխանում։

Գոյականի քերականական յուրահատկություններն են՝ հատուկ և հասարակ, անձի և իրի, հոլովի և հոլովման քերականական կարգերը։

Հաջորդ դասը նվիրվում է հատուկ և հասարակ գոյականների ուսուցմանը։

Հասարակ գոյականներն արտահայտում են միատեսակ առարկաների ընդհանրացված հասկացություններ։ Т- աձև աղյուսակով գրում ենք գոյականներ՝ առաջին շարքում տեսակի անուններն են իսկ 2-րդը այդ տեսակից մեկի անունը։

Հատուկ գոյականներն անվանում են եզակի առարկաներ՝ տարբերվելով նույն տեսակի այլ առարկաներից։ Հասարակ գոյականները երբեմն վերածվում են հատումների օրինակ՝ նվեր_ Նվեր, վրեժ_ Վրեժ, թագուհի_ Թագուհի։ Հատուկ գոյականները ըստ կազմության լինում են պարզ՝ Մասիս, Սարգիս, Երևան և այլն։

Այնուհետև բացատրում եմ, որ հասարակ անունները ազատ գործածվում են և՝ եզակի և հոգնակի թվերով, օրինակ՝ ծով_ ծովեր, թռչուն_ թռչուններ, մարդ_ մարդիկ։ Հատուկ անունները հոգնակի թվով չեն օգտագործվում, ինչպես Էջմիածին, Կասպից ծով, Արտակ և այլն։

Աշակերտները բերում են ինքնուրույն օրինակներ, կազմում նախադասություններ։

Որպես տնային աշխատանք հանձնարարում եմ գրել դարձվածքներ՝ որպես առաջին բաղադրիչ գործածելով աչք, քիթ, գլուխ, ձեռք գոյականները։

Հաջորդ ժամի նպատակը հատուկ անունների ուղղագրության ուսուցումն է ։

Բացատրում եմ, որ հատուկ անունները լինում են պարզ և բաղադրյալ։ Պարզ հատուկ անունները գրվում են մեծատառով ։ Օրինակ՝ Հայաստան, Անանիա, Գևորգ, Սեղան։

Բաղադրյալ հատուկ անունները գրության երկու ձև ունեն ։

1. Բոլոր բաղադրիչները սկսվում են մեծատառով

ա) Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում ՝ Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն

բ) Եթե բոլոր բաղադրիչները առանձին _ առանձին հատուկ անուններ ՝ Հովհաննես Թումանյան, Նար Դոս, Սայաթ- Նովա

գ) Լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը մականուն՝ Աշոտ Երկաթ, Արա Գեղեցիկ, Իվան Ահեղ, Սահակ Պարթև....

դ) Երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են, բայց փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ և գրվում մեծատառով ՝ Ծիր Կաթին, Նոր Երկիր, Մեծ Արջ

ե) Եթե բոլոր բաղադրիչները << Սուրբ>> մականվան հետ միասին հատուկ անուն են ՝ Սուրբ Ստեփանոս, Սուրբ Նշան...

Միայն առաջին բաղադրիչն է սկսվում մեծատառով

ա. Աշխարհագրական հատուկ անունները, որոնցում Լրացյալը առանձին վերցրած հատուկ անուն չէ ՝ Արարատյան դաշտ, Կովկասյան լեռնաշղթա, Խաղաղ օվկիանոս

բ. Պետությունների վարչատարածքային հին ու նոր այն անուններում, որոնց մեջ լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ ՝ Վայոց ձորի մարզ, Կարսի թագավորություն, Կիլիկիայի հայկական պետություն..

գ. Տոնակատարությունների անվանումները, ստեղծագործությունների վերնագրերը, կրծքանշանների, պատվոգրերի, ազդագրերի անվանումները ՝ Մայիսի ինը, Նոր տարի, Նոբելյան մրցանակ, Ազգային հերոսի կոչում...

դ. Համաշխարհային եզակի կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների ՝ Միավորված ազգերի կազմակերպություն, Առևտրի համաշխարհային խորհուրդ, ՀՀ Ազգային ժողով:

Գոյականի թվի քերականական կարգը բացատրում ենք՝ օգտագործելով դեդուկտիվ եղանակը՝ տարբեր փուլերում կիրառելով նաև ժամանակակից մեթոդներ: Т-աձև աղյուսակի առաջին սյունակում գրում ենք եզակի թվով գոյականներ, իսկ երկրորդում կազմում հոգնակի և ընդգծում հոգնակիակերտ մասնիկը:

Նշում ենք որ եզակի թիվը ցույց է տալիս մեկ կամ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես: Օրինակ՝ բնակարան, սեղան ...

Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ և կազմվում է եր, նոր, ք, իմ, այս մասնիկներով: Միավանկ բառերը ստանում են եր մասնիկը՝ քար_ քարեր, լար_լարեր, տող_տողեր, իսկ բազմավանկ բառերը ՝ ներ ՝ պատուհան_ պատուհաններ,պահածո_ պահածոներ և այլն: Կան այս օրինաչափությունից շեղումներ դրանք են՝

ա) գրաբարյան մի շարք բառերում բառավերջի ն_ ն եզակի թվում ընկել է, իսկ հոգնակիում ՝ վերականգնվել ՝ մկներ , լեռներ, բեռներ..

բ) բարդ բառերը որ մասնիկ են ստանում այն դեպքում, երբ բառի վերջին բաղադրիչը միավանկ գոյական է ածխահոր_ ածխահորեր, ոտնաձայն_ ոտնաձայներ, ցուցափեղկ _ ցուցափեղկեր, իսկ եթե միավանկ բայարմատ է ստանում է ներ մասնիկը՝ ածխահատ_ ածխահատներ, դավադիր _ դավադիրները, ջրկիր_ ջրկիրներ..

Այն բառերում, որտեղ գաղտնավանկը նախորդում է լիարժեք վանկին, ավելանում է ներ՝ կտուր_ կտուրներ, զրահներ, մկրատ _ մկրատներ, խնձոր_ խնձորներ, իսկ եթե գաղտնավանկը հաջորդում է լիարժեք վանկին ավելանում է եր՝ աստղեր, անգղեր, դուստրեր, վագրեր։

Ք_ ով հոգնակի կարող են կազմվել ցի ածանցով վերջավորվող բառերը՝ գյումրեցիք, լոռեցիք, վանեցիք։

Իկ մասնիկով կազմվում է մարդ բառը և նրանով կազմված բառերը ՝ մարդիկ , տղամարդիկ , նախամարդիկ

Այք մասնիկով ՝ կին_ կանայք,տիկին _ տիկնայք, նաեւ տիկիններ, պարոններ։

Անհոգնական գոյականները նրանք են, որոնք չունեն հոգնակի թիվ հանդես են գալիս միայն եզակի թվով։ Դրանք են՝ ուսանողություն, պանդխտություն,կանաչեղեն, ուսում, ծագում, քրիստոնեություն, ռոմանտիզմ..

Անեզական գոյականներն են՝ ենք, անք, ոնք, ունք, ածանցներով կազմված բառերը՝ Վարդանանք, Վեդունք, Սերոբենք

եր, ներ մասնիկներ ունեցող աշխարհագրական հատուկ անուններ ՝ Կարպատներ, Ալպեր, և այլն։

Գոյականների հոլովների և հոլովումների ուսուցումը.

Նախադասության մեջ բառերի փոփոխության ամբողջությունը կոչվում է հոլով, իսկ յուրաքանչյուր փոփոխության ձև՝ հոլով։ Հոլովի քերականական կարգը նպատակահարմար է ուսուցանել երեք փուլով՝ հոլովի ձևի, իմաստի և շարահյուսական կիրառության տեսակետից։ Աշակերտների մեջ հոլովը պետք է ամրապնդել իբրեւ գոյականի, առարկայանիշ դերանվան և գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի քերականական կարգ, որով արտահայտվում են բառերի միջև եղած զանազան հարաբերություններ և որով որոշվում է բառի շարահյուսական պաշտոնը տվյալ նախադասության մեջ։

Առանձնակի դժվարություն է ներկայացնում ուղղական հայցական և սեռական_ տրական հոլովների ուսուցումը։ Հիշեք , որ հոլովական իմաստը գլխավորապես պայմանավորված է նրանց շարահյուսական գործառույթով։ Ուղղականը և հայցականը ձևով նման են , բայց շարահյուսական հակառակ բևեռներ են. մեկը գործող է , մյուսը ՝ գործողությունն իր վրա կրող։

Ուղղական հոլովը բացատրելու համար գրում եմ նախադասություններ։

1. Դաշտը օրորվում է մեղմ քամուց։

2. Հնձվորը նստեց առվի եզրին ։

Գտնում են ենթակաները և ստորոգյալները ։ Հիշում ենք , որ ենթական ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան ։ Պատասխանում է ով, ովքեր, ինչ, ինչեր հարցերին ։ Դաշտը, Հնձվորը ենթակաները դրված են ուղղական հոլովով։

Ուղղական հոլովը գոյականի ուղիղ ձևն է զրո վերջավորությամբ։

Երեխաները կազմում են ինքնուրույն նախադասություններ, գտնում ենթակաները։ Ուղղական հոլովով կարող են դրվել նաև գոյականով արտահայտված լրացումները՝ օրինակ՝ Վարպետ Սուքիասը լավ մարդ է։

Գիտնական Գրիգորը նոր հայտնագործություն արեց։

Ստորգյալը կազմող բառը ՝ ստորոգելիական վերադիրը։

Հաղթողը մեր դպրոցի աշակերտն էր։

Լողորդը իմ եղբայրն է։

Կոչական բառերը.

Երեխաներ' պահպանեցեք բնությունը ։ Իմ սու'րբ հայրենիք դա սրտիս մեջ ես...

Սեռական հոլովը բացատրելու համար գրում ենք նախադասություններ։

Արևի լույսը տաքացնում է։ (ծագում)

Հայկի գիրքը պատկերազարդ է։ (արական)

Հաղթանակի լուրը տարածվեց ։ (առարկայական)

Պարանոցի զարդը շատ գեղեցիկ էր (տեղի)

Այսօրվա անելիքը վաղվան մի թողնի (ժամանակ)

Ձևավորման առանձնահատկությամբ տարբերվող տրական և սեռական հոլովները , որոնց մեջ որոշիչ հոդը դառնում է տրականի համար հոլովակազմիչ մասնիկ։ Իբրև սեռական և տրական հոլովների շարահյուսական կիրառությունների տարբերակիչ կողմ՝ պետք է նշել այն հանգամանքը , որ սեռական հոլովով դրվում է անդամները, որոնք կապվում են գոյականի հետ , մինչդեռ տրական հոլովը կապվում է բայական անդամի լրացումների հետ։ Սեռական և տրական հոլովների ուսուցման համար արդյունավետ է Վեննի գծապատկերի կիրառումը ։

Դարձյալ պետք է շեշտել երկուսի շարահյուսական պաշտոնների ընդհանրությունները ՝ ելնելով որոշակի օրինակներից։ Այս նրբությունները պետք է աշակերտների մեջ ամրապնդել գործնական աշխատանքով ։ Գործնական աշխատանքներում արդյունավետ է տարբերակների առաջարկումը, որոնցում աշակերտը պետք է ընտրի ճիշտ և սխալ տարբերակները ՝ երկու դեպքում է բացատրելով և հիմնավորելով ։ Օրինակ՝ գտնել սեռականի գործածության սխալ դեպքերը , գտնել տրական հոլովի որոշյալ առումով արտահայտված հանգման խնդիրն ու արտահայտել անորոշ առումով ։

1.Բացատրում եմ, որ սեռականը արդեն թեք հոլով է, ստանում է տարբեր հոլովիչներ՝ ի, ու, ան, վա, ոջ, ց, ո, ա։ Օրինակ այգի_ այգու, քույր_ քրոջ, տուն_տան, տարի_ տարվա, Հայկենք_ Հայկենց

2. Տրական հոլովը բացատրելու համար գրում ենք նախադասություններ։

Անցորդները մոտեցան ցանկապատին(ինչին) և դիտեցին սպիտակ և վարդագույն ծաղիկներով փթթուն ծառերը ։

Նրանք հասան մի վճիտ աղբյուրի(ինչի)

Աշակերտները ծաղիկներ նվիրեցին հյուրերին (ում)

Կազմում են գոյականներից մեկի ուսուցված ձևերը և բացատրում, որ տրական հոլովը նման է սեռական հոլովին , միայն որոշյալ առման դեպքում ստանում է ը կամ ն հոդ։

Հայցական հոլով բացատրելու համար գրում եմ երկու նախադասություն ուղղական և հայցական հոլովներով։

Օվկիանոսը փոթորկվեց։

Ես տեսա փոթորկված օվկիանոսը։

Առաջին նախադասության մեջ օվկիանոսը գործողություն կատարողն է ՝ ենթական, իսկ երկրորդ նախադասության մեջ օվկիանոսը գործողությունը կրող առարկան է ուղիղ խնդիր։

Հայցական հոլովը ցույց է տալիս նաև գործունեության ժամանակ, չափ, տեղ նպատակ։

Եղբայրս մեկնեց գյուղ։

Բուն ցերեկը թաքնվում է , իսկ գիշերը որսի ելնում։

Տղաները հինգ կիլոմետր հեռացել էին գյուղից։

Պետք է կարողանալ տարբերել տալ ուղղական և հայցական հոլովները։ Ուղղական և հայցական հոլովները։ Ուղղական և հայցական հոլովները ձևով նման են բայց շարահյուսական հակառակ բևեռներ են ,. մեկը գործող է, մյուսը՝ գործունեությունն իր վրա կրող ։ Բացի այդ հայցականը չունի սեփական ձև բայց ունի ինքնատիպ ձևավորում՝ անձնանիշ գոյականները հայցականում ձևով նման են տրականի։ Հայցական հոլովով դրված գոյականը երբեք չի դառնում ենթակա, իսկ ուղիղ խնդիրը երբեք չի արտահայտվում ուղղական հոլովով ։ Ինչպես որ հոլովներն են պայմանավորում բառի շարահյուսական պաշտոնը կարող ենք որոշել բառի հոլովը։Այս հակադարձ օրինաչափությունն ընկալելի դարձնելու համար կարելի է օգտվել Վեննի գծապատկերից։

Եթե աշակերտների մոտ ամրակայվեն հոլովների շարահյուսական կիրառության առանձնահատկությունները , ապա դրանով կցրվի նրանց տարակուսանքը ձևով նման, իմաստով տարբեր հոլովների ճանաչման առումով։ Այստեղ պետք է կանգ առնել երկու հոլովների համար ընդհանուր շարահյուսական պաշտոնի՝ բացահայտիչի վրա։ Եթե բացահայտիչը պարզաբանում է ենթակայի միտքը ապա բառը դրված է ուղղական հոլովով ՝ Մինաս Ավետիսյանը ՝ արևի նկարիչը ծնունդով Ջաջուռից է։ Իսկ եթե այն բացահայտում է ուղիղ խնդրին, ապա դրված է հայցական հոլովով ՝ Ես սիրում եմ իմ քարքարոտ հայրենիքը՝ Հայաստանը ։

Բացառական հոլովը բացատրելու համար դիտարկում ենք օրինակները . Այգուց դուրս եկավ այգեպանը։(տեղ)

Ծառից թափվեցին դեղնած տերևները ։(անջատման)

Անտառից լսվում էր թռչունների դայլայլը։

Այգուց, ծառից, անտառից բառերը բաժանվում են բաղադրիչների, նշում վերջավորությունը ասում, թե ինչ է ցույց տալիս այդ գոյականները։

Բացառական հոլովի շարահյուսական պաշտոններից պետք է առանձնացնել անջատման, ներգործման, վերաբերության, սահմանափակման խնդիրները, տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի պարագաները.

ա) Քաջարի Վարդան Մամիկոնյանը սիրված է ժողովրդի կողմից։

բ) Պատուհանը շրխկոցով բացվեց քամուց։

գ) Բեշիրի հոգին խռովված էր այդ պարտությունից։

դ) Հարավային բոցակեզ արևից կիսվել էր Անհուշ բերդի շրջակայքը։

ե) Վաղուց, վաղուց ես դու ինձ մոռացել։

զ) Վշտից նա քարացել էր ։

է) Ձայնից ճանաչեցի։

ը) Որոշիչը՝ << Բրդից գուլպաներ էր հագել, կաշվից ձեռնոցներ էր դրել>>

թ) Մասնական ենթական՝ << Աշակերտներից մասնակցում էին պարահանդեսին։

ժ) Ստորոգելիական վերադիրը `<<Ելույթ ունեցողները առաջավոր ուսանողներից էին ։

Գործիական հոլովը բացատրելու համար գրում ենք բառեր առանձնացնում ո'վ, բ վերջավորությունները։ Ապա նշում ենք, որ գործիական հոլովով արտահայտվում են

ա. Միջոցի խնդիրը՝<< Կարմիր դաշտով առաջ շարժվեց>>։

բ. Ներգործող խնդիրը `<< Բարձրավանդակը ծածկվեց զինվորներով>>։

Տեղի, ժամանակի պարագաները՝<< Գնացքն անցնում էր նեղ ձորով>>։

<<Փախիր գիշերով եւ թաքուն արի >>։

դ. Ձևի միասնության պարագաները՝<< Ծերը գնքալով մեջքից ցախերը վար առավ>>։

.Նրանք դաշտ գնացին բահերով, մթերքի պաշարով>>։

ե. Հիմունքի, զիջման, չափի պարագաները `<< Սուլթանի հրամանով գտան փախստականին>>։ <<Ընկերոջս առաջարկով որսի գնացինք>>։ <<Շատ աշխատելով արդյունքի չհասավ >>։ <<Շաբաթներով տուն չէր գալիս>>։

զ. Որոշիչը `<< Գրավիչ աչքերով աղջիկը գերել էր տղային>>։

Ներգոյական հոլովը ունի ում վերջավորությունը և ցույց է տալիս տեղը, որի մեջ կամ սահմաններում կատարվում է գործողությունը ` հանդես գալով տեղի պարագայի պաշտոնով `<< Ձորերում թաքնված մութը տարածվում էր դաշտում >>։Ժամանակի պարագայի՝<< Հնում շատ ոսոխների են հարձակվել Հայաստանի վրա>>։ Սակավ դեպքերում `ձևի պարագայի `<<Սրտում էր պահել այդ վիշտը>>։

Սրանց ուսուցումն ամրապնդելու համար կարելի է առաջարկել, որպեսզի աշակերտը բացառական հոլովով արտահայտած տեղի պարագան վերափոխվի մի դեպքում գործիական հոլովի , մյուս դեպքում ներգոյական հոլովի, այսպես փոխարկել նաև այլ շարահյուսական պաշտոնների տարբեր հոլովաձևերը։ Գյուղից մարդիկ տեղափոխվեցին քաղաք (որտեղից) ։ Ժողովը տեղի ունեցավ գյուղում(որտեղ).

Անհրաժեշտ է ներկայացնել նաև հոլովաձևերի ոճական կիրառությունների որոշ առանձնահատկություններ ինչը կնպաստի աշակերտների բառապաշարի հարստացմանը ։ Օրինակ հոլովման երկվություն են ցուցաբերում հույս, լույս, սուգ, կայսր, դուստր, գալուստ , ծնունդ, հանգիստ և նման մի քանի այլ բառեր, որոնք ճիշտ է ժամանակակից հայերենում հոլովվում են ի հոլովմամբ սակայն հաճախ խոսքի պատմական երանգի ստեղծման և ոճական

նկատառումներով կարող են հոլովվել նաև գրաբարյան ձևով ՝ հույս- հուսո հույսի, կայսեր- կայսրի, դուստր - դստեր- դուստրի, ծնունդ - ծննդյան- ծնունդի , հանգիստ - հանգստյան- հանգստի։

Պետք է կարևորել հատկապես հոլովների փոխաբերական կիրառությունների, մակդիրային կապակցությունների նման կազմություններից առաջացած դարձվածքների ուսուցումը ։ Օրինակ քար սիրտ , ոսկի ձեռքեր , տաք գլուխ, համբերության բաժակ , քավության նոխազ , Բերմուդյան եռանկյունի և այլն։

Հոլովաձևերի զանազան ոճական կիրառություններն ընկալելի դարձնելու համար աշակերտների գիտակցության մեջ ամրակայելու համար դրանք կարելի է ներկայացնել գեղարվեստական խոսքի օրինակով։

Աշակերտների գրավոր և բանավոր խոսքում երբեմն նկատվում է հոլովաձևերի սխալ կազմություններ։ Դրանք հաճախ պայմանավորված են արտասանական հնչյունական շեղումներով , հոլովաձևերի կազմության կանոնների չիմացությամբ , ինչպես օրինակ ՝ առումով փոխանակ առվով , առուից փոխանակ՝ առվից և այլն ։ Համանման սխալները կանխելու նպատակով առանձնահատուկ տեղ պետք է տալ հոլովաձևերի կազմության օրինաչափությունների ուսուցմանը ։Թեք հոլովաձևերը կազմվում են ուղղական կամ տրական հիմքով ։

Դրա համար էլ հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել սեռական հոլովի ճիշտ կազմությանը ։

Ժամանակակից հայերենում հոլովները ութն են ՝ ի, ու, ան,ոջ, վա, ց , ո, ա ։ Սրանցից վեցն պատկանում են արտաքին հոլովման , այսինքն հոլովումը կատարվում է բառավերջում ավելացնելով համապատասխան վերջավորությունը կամ հոլովիչը , իսկ վերջին երկուսի դեպքում հոլովումն իրականացվում է բառի ներսում ձայնավոր հնչյունի կամ երկհնչյունի փոփոխությամբ ։

Ի հոլովման պատկանող բառերը օժտված են ձևային և իմաստային այնպիսի բազմազանությամբ , ինչն անհնարին է դարձնում նրանց որոշակի սահմաններում ընդգրկելը։Այդ

պատճառով էլ նրանց անվանում են ընդհանրական հոլովում։ Այն ամենատարածված հոլովումն է քանի որ ժամանակակից հայերենի բառերի մեծ մասը հոլովվում է այս հոլովիչով ։ Մոտավոր կերպով կարելի է մատնանշել այն բառախմբերը ,որոնք ենթարկվում են ի արտաքին հոլովման։ Դրանք իր կամ անձ ցույց տվող վերացական իմաստ ունեցող բուսական, կենդանական աշխարհը ներկայացնող և ամենատարբեր բնույթի բառեր ։ Ի հոլովմամբ են հոլովվում տարբեր խոսքի մասերի պատկանող այն բառերը , որոնք ունեն գոյականական կիրառություն՝ գեղեցիկ- գեղեցիկի, ութ- ութի։

Ու հոլովումը պատկանում է ձևային հոլովումների շարքին, որովհետև նրա սեռական - տրականը կազմվում է ու հոլովիչի հավելումով ։ Ընդգրկման սահմաններով այն զիջում է միայն ի ընդհանրական հոլովմանը և ներառում բառային երեք խմբեր

1. Բառեր , որոնք ունեն ի վերջավորություն և առանց այդ վերջավորության չեն կարող գործածվել , օրինակ ՝ կղզի , ծերունի , այգի, թթենի..

2. Ու հոլովման ենթարկվող մի քանի բառեր (Աստված , մարդ , անկողին, ամուսին, ինչպես նաեւ ձի) ։

3. Այս խմբի մեջ են մտնում անորոշ դերբայ ձևերը։

Ան հոլովումը նույնպես ձևային հոլովման համակարգում գործող հոլովումներից է, պատկանող բառերի բազմազանությունը նույնպես կարելի է ընդգրկել երեք խմբում։

1. Բառեր , որոնց կազմության մեջ կա ում գոյականակերտ ածանց , սրանք բայանուններ են, որոնք գործողությունը կամ եղելությունը ներկայացնում են անշարժ վիճակում , ինչպես ՝ անջատում , շարժում , միացում,

2.Գրաբարյան միավանկ բառեր , որոնք ունեցել են ն վերջնահնչյուն , ինչը եզակի թվում ընկել է, բայց տարբեր բաղադրությունների մեջ վերականգնվել , օրինակ ՝ ուռ - նռան, նուռ- նռան , մուկ- մկան և այլն ։

3. Գարուն, ամառ, աշուն, ձմեռ և մանուկ բառերը։

Վա հոլովվում իմաստային հոլովման դրսևորումներից մեկն է , քանի որ նրա տարածքում գործում են բացառապես ժամանակ ցույց տվող բառեր՝ ժամ , օր, շաբաթ , ամիս, այսօր, կեսօր, երեկ, վաղը, ցերեկ, գիշեր, առավոտ և այլն։

Ոջ հոլովումը նախորդի պես իմաստային հոլովման համակարգում է գործում , որովհետև իր մեջ ներառում է միայն այնպիսի բառեր , որոնք անձի անուններ են կամ նույնն է, թե անձ են ցույց տալիս։

Թվով դրանք շատ չեն ՝ քույր , տեր, կին, ընկեր, աներ, սկեսուր, տալ, տեգր, հորաքույր, մորաքույր, քեռակին, տանտիկին, գործատեր, և այլն։

Ց հոլովումը արտաքին թեքման երջին հոլովումն է , որ դասվում է ձևային հոլովների շարքը։ Դրան են պատկանում անք, ենք, ոնք, ունք, գոյականակերտ ածանցներ ունեցող բառերը։

Ք վերջնահնչյուն ունեցող բառերը նույնպես ենթարկվում են ց հոլովման՝ Սաքոյենք- Սաքոյենց և այլն ։

Ա հոլովումը ներքին թեքման ձև է որը գտնվում է իմաստային հոլովման հարացունցում։ Դրան պատկանում են երեք խմբի բառեր

1. - ություն ածանց ունեցող բառերը ։

2. բառեր , որոնք վերջանում են յուն հնչյուններով՝ ձյուն, անկյուն, սյուն,

3. Շուն , տուն և անուն բառերը

Ո-ն գոյականի վերջին հոլովումն է ։ Դրան պատկանում են իմաստով մոտ սակավաթիվ բառեր ՝ հայր, մայր, եղբայր, նաև այն բառերը որոնց մեջ սրանք հանդես են գալիս իբրև վերջին բաղադրիչ։

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հոլովի քերականական կարգը լիարժեք յուրացնելու համար պետք է հասնել հոլովաձևերի իմաստային և շարահյուսական գործառույթների գիտակցական- տրամաբանական ընկալմանը ։ Պետք է կիրառել գրավոր և բանավոր խոսքում գոյականի հոլովաձևերի ճիշտ և գիտակցված կիրառելու կարողությունների զարգացմանը նպաստող ավանդական և ժամանակակից տարբեր հնարներ , օրինակ վերկուծական- համադրական, խմբային հետազոտության, ուսուցման ԽԻԿ համակարգ , Վեննի գծապատկեր, գծագրեր , աղյուսակներ։ Յուրաքանչյուր հոլովի ուսուցմանը պետք է հաջորդեն ամփոփիչ հարցեր, գրավոր և բանավոր գործնական վարժություններ։

Պետք է որոշակիորեն տարբերակել հոլովաձևերն ու կապային կառույցները, որոնք խոսքում հաճախ լինում են հավասարարժեք ։ Կապային կառույցը որպես նախադասության անդամ , մեկ բառաձևի դեր է կատարում ։ Պատահական չէ որ նախադասության անդամի դերում հոլաձևն ու կապային կառույցը կարող են փոխարինել իրար , համարժեք են ,շարահյուսական հոմանիշներ։

Այս առումով հոլովների գործածության վերաբերյալ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը որ թեև նախադասության անդամ դարձած հոլովված գոյականի ու կապային կառույցը հոմանիշներ են , բայց կապակցական- իմաստային հարաբերության արտահայտելու հարցում հավասարարժեք չեն . բառաձևերը միշտ արտահայտում են չմասնավերված ընդհանուր իմաստ , իսկ կապային կառույցները ավելի մասնավորեցված իմաստ։ Այսպես՝ << Ափսեն դրված է սեղանի վրա, կողքին, տակ և այլն>>։

Հոլովաձևն այստեղ արտահայտում է չսահմանազծված ընդհանուր տեղ։ Դրան զուգահեռ երկրորդ նախադասության մեջ զանազան կապերով նշվում է առարկայի գտնվելը, տեղային որոշակի հատվածներ ։ Հոլովական վերջավորությունը ավելի վերարցարկված են ավելի անորոշ իմաստ ունեն քան կապերը։ Ասացին ավելի հասկանալի դարձնելու համար կատարում ենք խմբային և գործնական աշխատանքներ։

Գրատախտակն կարելի է բաժանել երկու մասի ՝ առաջին մասում գրել նախադասությունը , որոնցում կան կապով ձևավորված բառակապակցություններ և աշակերտներին առաջարկել արտահայտել դրանք հոլովական վերջավորությամբ՝ առանց խախտելու նախադասությունների բովանդակությունը։

Գործնական աշխատանքն ավարտելուց հետո ամփոփվում է, որ չնայած կապերի մեծ մասնունեն հոլովական վերջավորության իմաստ , սակայն այնուամենայնիվ կան կապական կառույցներ, որոնք հնարավոր չէ փոխակերպել հոլովաձևերի, օրինակ՝ . Նա ընկավ հանուն հայրենիքի. Առանց հավատի ես ինչպես ապրեմ և այլն

Հետևություն ՝ ինչքան էլ հոլովաձևերն ու կապային կառույցները հոմանիշներ են , սակայն դրանք քերականական տարբեր իրողություններ են։

Եզրակացություն

Ամբողջ թեմայի ուսուցման ընթացքում դպրոցում, տանը կատարվող վարժությունների, խմբային և գործնական աշխատանքների կատարման միջոցով հասնում եմ դաստիարակչական խնդիրների լուծմանը: Նույն նպատակն է հետապնդում նաև մյուս թեմաների ուսուցման ընթացքում:

Արդյունքում ունենում ենք ինքնուրույն, դիմացինի կարծիքը հարգող, ընկերասեր, բոլոր հարցերում սեփական կարծիք ունեցող , մարդկային բարձր արժեքներով օժտված անհատներ:

Օգտագործված գրականություն

1.Եզեկյան, Սարգսյան, Սաքապետոյան, հայոց լեզու 11-րդ դասարանի համար//: Երևան: 2015թ.:

2.Խաչատրյան Ս. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա //:Գյումրի: 2008թ.:

3. <<Հայոց լեզուն և գրականությունը>>2013, թիվ 3:

4.Հանրակրթության պետական չափորոշիչ 2019թ.:

5. Հովի. Բարսեղյան , Փ . Մեյթիխանյան Հայոց լեզու 7- րդ դաս. համար: